

Բանալի բառեր՝ տնտեսական զարգացում, տնտեսական աճ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, ընդերթօգտագործման Էկոլոգիական հետևանքներ, բնապահպանական փորձաքննություն:

ՀՏԴ 502:338(479.25)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ռազմիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի
դոցենտ, քիմիական գիտությունների թեկնածու*

Արթուր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ, մագիստրոս

Ցանկացած ժամանակաշրջանում տնտեսական և գործունեության եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը ՀՀ բնապահպանական կառավարման ու հսկողության համակարգի առավել գործուն մեխանիզմներից մեկն է, որը նպատակաուղղված է շրջակա միջավայրի որակի և նրա բնառեսուրսային ներուժի պահպանմանը, տնտեսության կայուն զարգացմանն ու բնակչության Էկոլոգիական անվտանգության ապահովմանը:

Վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից իրականացված նախաձեռնությունները զգալիորեն փոխեցին երկրի բնապահպանական քաղաքականության ուղղությունները, հատկապես՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացի և բնապահպանական փորձաքննության ազգային համակարգի դերի ու նշանակության արդիականացման տեսանկյունից:

Դրան նպաստեցին ՀՀ կողմից 19 միջազգային բնապահպանական կոնվենցիաների ստորագրումը և վավերացումը, որոնցից տվյալ համատեքստում առավել նշանակալից է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Եսպո կոնվենցիան (վավերացված է 14.05.1996թ.) և «Ռազմավարական Էկոլոգիական գնահատման մասին» արձանագրությունը (ուժի մեջ է 24.04.2011թ.): Միաժամանակ՝ նպաստավոր են նաև օրենսդրական նախաձեռնությունները, մասնավորապես, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ. ՀՀ նոր օրենքի ընդունումը:

Սակայն տեղին է նշել, որ տվյալ ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունները սակավաթիվ են, իսկ շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական, Էկոլոգիական և սոցիալական վնասների գնահատման մեթոդաբանության կատարելագործման գործընթացը ՀՀ-ում դեռևս չի հասել անհրաժեշտ գիտագործնական վերջնարդյունքի: Հետևաբար, կարևոր հիմնախնդիրներից է տնտեսական գործունեության ցանկացած տեսակի, ինչպես նաև ռազմավարական Էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) մեթոդաբանության վերանայումը և հստակեցումը, հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:

Պարզաբանման համար այժմ անդրադառնալով ՀՀ-ում իրականացվող տնտեսական գործունեության Էկոլոգիական հետևանքների ձևավորման որոշ օրինաչափությունների գնահատմանը: Նախ՝ վերլուծենք բնապահպանական վճարների (ԲՆՊԿ) և բնօգտագործման վճարների (ԲՆԳՎ) դիմամիկան, վերհանելով այն հիմնախնդիրները, որոնք նկատելի են կամ կարող են առաջանալ «տնտեսական օգուտ-Էկոլոգիական օգուտ» համակարգում: Դրա համար կատարենք համեմատություն՝ ըստ 2005-2015թթ. տնտեսական զարգացման նախաձեռնումային ու հետձեռնումային տնտեսական աճի ցուցանիշների (տես՝ աղյուսակ 1):


Համեմատության արդյունքից հետևում է, որ ՀՆԱ-ն աճել է մոտ 44%-ով, իսկ 2014-2015 թթ. դեպքում՝ գրանցվել է 51%-ի չափով անկում: Ընդհանուր առմամբ վճարների դիմամիկ փոփոխությունը տատանողական բնույթի է և 2013-2015 թթ. ՀՆԱ ի աճի երկրորդ պիկի անկումը 32.47%-ով ավելի խորն է, քան նվազումը 13.18%-ով 2008-2009թթ. (տես՝ գծապատկեր 1):

Առաջին պիկը պայմանավորված է արդեն հայտնի պատճառներով՝ տնտեսական ճգնաժամով, տրանսֆերտների կրճատումով, աղբատության բարձր մակարդակով, որոշակիորեն նաև տնտեսական և Էկոլոգիական քաղաքականության բացթողումներով: Դա ի վերջո բերեց տնտեսական զարգացման բացասական Էկոլոգիական հետևանքների ուժեղացմանը: Հետձեռնումային փուլի 2009-2014 թվականներին ՀՆԱ-ն վերականգնեց աճի միտումը, ինչը կապված է հանքարդյունահանման ծավալային աճի բարձր տեմպերի ազդեցության հետ: Ի հաստատումս դրա՝ նշենք, որ բնօգտագործման վճարների առավելագույնը՝ 90%-ից ավելին պատկանում է օգտակար հանածոների արդյունահանման դիմաց վճարներին: Բացի այդ, սկսած 2012թ., բնօգտագործման վճարներից հանվել են մետաղների արդյունահանման վճարները, եւ որի մասին է վկայում նաև գծապատկեր 2-ում բերված կորի կտրուկ անկման հետագիծը 2013-2014թթ., որից հետո նկատելի է կայունացման աննշան միտում 2014-2015թթ.:


Աղյուսակ 1.
ՀՀ բնապահպանական և բնօգտագործման վճարների ցուցանիշները՝ 2005-2015թթ.¹

Տարի Ցուցանիշ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
ՀՆԱ, մլրդ դրամ	2242.9	2656.2	3149.3	3646.1	3165.5	3461.9	3817.3	3997.9	4266.8	4843.2	3221.8
ԲՆԳՎ, մլրդ դրամ	2.649	3.988	4.174	4.273	1.832	2.566	0.803	0.546	0.706	1.430	1.215
ԲՆԳՎ, մլրդ դրամ	2.166	2.547	5.010	5.693	4.289	6.534	4.792	1.091	1.224	1.539	1.806
ԲՆԳՎ+ԲՆԳՎ ՀՆԱ-ի նկատմամբ, %	0.215	0.246	0.292	0.273	0.193	0.262	0.146	0.040	0.045	0.093	0.093

Գծապատկեր 1.
ՀՆԱ-ի դինամիկան 2005-2015թթ. (մլրդ դրամ)^{2,3}



Գծապատկեր 2.
Ընդերքօգտագործման վճարների դինամիկան 2005-2015թթ. (մլն դրամ)^{4,5}



ՀՆԱ-ի, բնապահպանական և բնօգտագործման վճարների դինամիկայի վերլուծությունը վկայում է այն, որ տնտեսության հետզհետեաժամային վերականգնման միտումները գրեթե պահպանվում են: Սակայն չի փոխվում տնտեսական աճի բնատար բնույթը, ինչը պահանջում է հրատապ քայլերի ձեռնարկում՝ բնական ռեսուրսների բանական օգտագործումն ապահովելու, Էկոլոգիական վնասները և վտանգները կանխելու ուղղությամբ: Ավելի հայտ է, որ ընդերքօգտագործման ազգային ռազմավարության գերակայությունների և դրանց գիտական հիմնավորվածության բացակայության պայմաններում տնտեսական աճի ցանկալի ցուցանիշների հարթահարումը իրականացվում է հիմնականում օգտակար հանածոների արդյունահանման ծավալների աճի միջոցով (էքստենսիվ ընդերքօգտագործման դրսևորում):

Միաժամանակ աճում է ծանրաբեռնվածությունը շրջակա միջավայրի և նրա բաղադրիչների վրա, որը մի շարք մարզերում բնութագրվում է բարձր խոցելիությամբ: Դրա մասին են վկայում նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության ամփոփ տվյալները, որոնցում հաշվի են առնված նաև գործունեության զուգակցված/կոնստեյնտիվ ազդեցության արդյունքները (տես՝ աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ից հետևում է, որ առավել մտահոգիչ են հետզհետեաժամային փուլի 2009-ից դիտվող մթնոլորտային օդի կայուն աղտոտման միտումները և թափոնազոյացման ցուցանիշների աճը: Դիտարկվող ժամանակահատվածում թափոնազոյացման ցուցանիշները 2005թ. համեմատ գրանցել են 1,3-4,5 աճի տեմպ: Ուսումնասիրություններից պարզվեց նաև, որ մեծ քանակությամբ վնասակար արդյունաբերական թափոններ են առաջանում Սյունիքում, Լոռիում, Շիրակում,

¹ ՀՀ «Ռին+20» ազգային գնահատման զեկույց, Բնօգտագործման և բնապահպանական վճարները, Երևան, 2012, էջ 40-41

² <http://www.minfin.am/index.php?fl=260&lang=1>, ՀՆԱ՝ ըստ եվրոպական հաշիվների համակարգի (NASE 1) 2000-2014թթ., ՀՀ Ֆինանսների նախարարություն

³ ՀՀ ԱՎԾ տարեգիրք, 2015թ. - էջ 210 / բնապահպանական և բնօգտագործման վճարները, <http://www.armstat.am/file/doc/99461588.pdf>

⁴ ՀՀ ԱՎԾ, Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2004-2013թթ., Ընդերքօգտագործման վճարները, էջ 106-108

⁵ ՀՀ ԱՎԾ տարեգիրք, 2015թ., էջ 209-210, բնապահպանական և բնօգտագործման վճարները, <http://www.armstat.am/file/doc/99461588.pdf> // 2016թ., էջ 209-210

Գեղարքունիքում և Կոտայքում, ինչը պայմանավորված է հիմնականում քիմիական և լեռնամետալուրգիական արդյունաբերության ու շինանյութերի արտադրության ոլորտների ակտիվությամբ: 2013թ., օրինակ, վնասակար թափոնների և կյուլթերի քանակությամբ Գեղարքունիքի մարզը (27687,5 հազ.տոննա) գերազանցել է Լույսիսկ Սյունիքի մարզին (21561,9 հազ. տոննա): Հավելենք նաև, որ ՀՀ-ի 19-ը պղծամբարներից 9-ը գտնվում են Սյունիքում, դրանցից 4-ը կոնսերվացված են և պատկանում են Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին (Բաջարան, Փխրուտ, Լեռնաձոր, Արծվանիկ): Կարգավորման կարիք ունեն նաև պղծամբարների մշտադիտարկումների և Էկոլոգիական անվտանգության ապահովման հարցերը:

Աղյուսակ 2.
Տնտեսական գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության արդյունքները (2005–2015թթ.)^{6,7}

Տարի Ցուցանիշ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Մթնոլորտային օդի աղտոտում, հազ. Տ	199.3	188.4	183.9	206.5	235.1	263.9	269.2	259.8	261.4	270.9	268.7
Աղտոտված ջրեր, մլն խմ	157	150	151	83	89	139	247	307	65	106	132
Թափոնագոյացում, հազ.Տ	11237.4	12420.7	13346.0	11455.4	14766.1	23307.8	27609.0	39030.9	49332.1	46511.9	47338.5
Ապօրինի անտառահատումներ, հազ. Հա	713	345	269	227	218	179	187	194	179	231	315

Պետք է նշել՝ որ գնահատումը կլիներ ավելի տպավորիչ, եթե պաշտոնական տվյալներում ներկայացված լինեին երկրորդային ռեսուրսների օգտագործման ոլորտը, որին ՀՀ-ում հատուկ է «բացթողնված օգուտների» Էֆեկտը: Համաձայն մեր դիտարկումների, այստեղ առկա է հավաստի տեղեկատվության պակասը, իսկ ապօրինի անտառահատումների ոլորտում տեղեկատվական խառնաշփոթը: Այսպես, գիտական տարբեր աղբյուրներում, Լույսիսկ ՀՀ-ի վիճակագրական տվյալներում ապօրինի անտառահատումները հաճախ ներկայացվում են տարբեր չափման միավորներով (օրինակ՝ հատ, խոր. մ, հա): Նման դեպքերում դժվար է ապահովել բնապահպանական վերահսկողության արդյունավետությունը, ինչը նպաստում է ոլորտում անպատժելիության մթնոլորտի ամրապնդմանը՝ իրավական գործընթացների կիրառման մեխանիզմի թերացման պատճառով:

*Ներկայացվել է 26.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*

⁶ ՀՀ ԱՎԾ տարեգիրք, 2004-2015թթ., <http://www.armstat.am/file/doc/99493638.pdf>, էջ 200-213, <http://www.armstat.am/file/doc/613.pdf>, էջ 198, <http://www.armstat.am/file/doc/99458093.pdf>, էջ 193,215,217

⁷ ՀՀ ԱՎԾ տարեգիրք-2016թ., <http://www.armstat.am/file/doc/994994123.pdf>, 2016, էջ 201-210